ՇԱՀԲՈՒԼԱՂ

Շուրիշկանից դէպի հիւսիս, կէս ֆարսախ հեռու, սարերի լանջին մօտ գտնուող մի հովտում ընկած է հայաբնակ Շահբուլաղը. սա փոքրիկ մի գիւղ է 27 տնով և 240 շնչով, որից 110-ը արական է և 130-ը իգական. նրանք գաղթել են 20 տարի առաջ հայաբնակ Միլակերտ գիւղից։ Խմելու ջուրն աղբիւրի է, որոնք բղխում են գիւղի հարաւային փէշերից, իսկ արտերը փռուած են գիւղին կից, որոնց համար գործ են ածում Բալասան գետակի ջուրը, որն անցնում է գիւղի հարաւային փէշից, ապա խառնուելով Զայենդերուդին՝ թեքւում է դէպի Նոր—Զուղա։

Հողատիրութեան տեսակը կալուածատիրական է. պատկանում է Միրզա-Հասան, Աղա-Հուսէյն, Աղա-Թաղի, Միրզա Ֆարզօլլահ, Մատ-Պաղէր, Միրզա-Բաբա աղաներին։ Գիւղացիները հողազուրկ են. նրանք մշակում են աղաների հողերը և բերքի $^1/_3$ մասը տալիս են նրանց, բացի այդ տարեկան վճարում են 100 թուման իբրև պետական հարկ։ Հողը հերկում են արօրով և նոյն բոյսերն են ցանում։

Գիւղն ունի Ս. Գրիգոր եկեղեցի, որի մի սենեակը ծառայում է իբրև դպրոց, ուր այս տարի սովորում էին մօտ 20 աշակերտներ։ Գիւղում կայ նաև մի ջրաղաց, իսկ արևմտեան կողքին գտնուում է աղայի ղալան։

Այս գիւղում ևս հարստահարութիւնները չափ ու սահման չունեն։ Այս տարի Աղա-Մահմատն իր զինուած ձիաւոր խմբով մտնում է գիւղ և զէնքի ուժով առնում է գիւղացիներից 200 թուման փող, 4 ձի և 7 հրացան։ Այնուհետև գալիս է Զաֆէր-Ղուլի Զարղամը. սա էլ իր քմահաճոյքի համաձայն հարստահարում է գիւղացիութեանը. առնում է 100 թուման փող և 3 բեռ ալիւր, ապա գալիս է Խաջէ-Շուքր-Օլլան, որ 40 թուման առնելով հեռանում է. իսկ Ցունաար ամսին զինուած ձիաւորներով գալիս են Միրզա-Հուսէյն, Հալտար և Ալի-Աքբար խաները, որոնք անասելի